ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

17 հունիսի, 2014թ. ք. Երևան

«Հակակոռուպցիոն ուսուցում» Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների համար

2014 թվականի հունիսի 18-ից-20-ը ժամը 10.30-ին, Գավառ քաղաքում (հասցե՝ք. Գավառ Բոշնաղյան 56/7) տեղի կունենա եռօրյա հակակոռուպցիոն ուսուցում Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների համար:

Ուսուցումները անցկացվելու են *Գեղարքունիքի և Կոտայքի* մարզերի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և ԶԼՄ-ների համար, որի հիմնական նպատակն է մեծացնել ՔՀԿ-երի և ԶԼՄ-ների դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում, հզորացնել վերջիններիս մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրները առավել լավ ըմբռնելու համար: Ուսուցումները հաջողությամբ ավարտած ՔՀԿ-ները և ԶԼՄ-ները հնարավորություն կունենան մասնակցել հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով տրամադրվող փոքր դրամաշնորհների մրցույթին:

Միջոցառման շրջանակներում ողջույնի խոսքով հանդես կգա «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ նախագահ, «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի ղեկավար Կարեն Զադոյանը:

Եռօրյա ուսուցումները անցկացվելու են ազգային, միջազգային փորձագետների և ծրագրի աշխատակազմի կողմից::

Ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Ծրագրի շրջանակներում կհզորացվեն ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները: Կկազմակերպվեն հակակոռուպցիոն դասընթացներ ՀՀ մարզերում ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների համար՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Այս միջոցառումների նպատակը հակակոռուպցիոն գործողությունների իրականացման առկա հնարավորությունների խորացումն է: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով կտրամադրվեն փոքր դրամաշնորհներ: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդման համար ՔՀԿ-ների մասնակցությամբ կմշակվի ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսություն:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Ծրագրի բյուջեն կազմում է 650.000 եվրո:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (ՀԵԻԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ՀԵԻԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) գործում է ավելի քան 10 տարի: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել.

Ծրագրի հանրային կապերի համակարգող Նարինե Կարապետյանին, աշխատանքային օրերին, ժամը 9.00-18.00; հեռ. 540199; ֆաքս 580299; URL http://www.ayla.am:
Կատարող՝ Նարինե Կարապետյան, Էլ.փոստ՝ pr@ayla.am:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա
Հասցե Նալբանդյան 7, բն. 2
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 54 01 99
Հեռապատճեն: +37410 58 02 99

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հասցե Բուզանդի 1/3
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 56 03 60
Հեռատճեն: +37410 56 03 60

Ծրագիրը ֆինանսավորվորվում է Եվրոպական միության կողմից

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հեռախոս +37410 54 64 94
Հեռապատճեն +37410 54 64 95

Եվրոպական միության գործադիր մարմինը Եվրոպական հանձնաժողովն է:

«Եվրոպական միությունը կազմված է 28 անդամ պետություններից, որոնք որոշել են աստիճանաբար իրար կապել իրենց նորարական մերուժը, ռեսուրսները և ապագան: Ընդարձակման 50 տարիների ընթացքում նրանք կառուցել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման գոտի, պահպանելով մշակութային բազմազանություն, հանդուրժողականություն և անհատական ազատությունները: Եվրոպական միությունը միտված է իր ձեռքբերումներն ու արժեքները կիսել իր սահմաններից դուրս պետությունների և ժողովուրդների հետ»: